**325. Գրիր գլխավոր անդամները. գործողություն կատարողին նշիր դեղին, իսկ նրա կատարած գործողությունը՝ կապույտ:**

Այս դեպքը Հարավային Անգլիայում է պատահել: Մի ծեր հոգևորականի աղքատիկ տանը առնետ է հայտնվում: Առնետն մշտապես է ելումուտ անում մարդու տուն: Տանտերը սովորում է նրան և երկուսն ընկերանում են: Մի գիշեր ծեր հոգևորականը վեր է թռչում խորունկ քնից: Առնետը կծել էր նրա այտը: Սկզբում մարդը զայրանում է դավաճան կենդանու վրա: Հետո տեսնում է վառվող վարագույրները: Նա հասկանում է, որ իր փայտե տնակը հրդեհ է ընկել:

Տունն էլ ամբողջությամբ կայրվեր, եթե բարեկամ առնետը չլիներ ու այտը չկծեր:

*329. Նախադասությունն ընդարձակիր* ՝ինչպիսի՞ *կամ* ո՞ր *հարցերին պատասխանող բառեր կամ բառակապակցություններ ավելացնելով:*

Օրինակ՝

Կինը հարցրեց: - Երիտասարդ կինը հարցրեց:

*Լայնեզր գլխարկով* կինը հարցրեց:

Շունը մտավ: - Բարի շունը մտավ:

Սիրտը քար է: - Վատ սիրտը քար է:

Հայրն ընկեր է: - Լավ հայրը ընկեր է:

Երկիրը պտտվում է: - Կլոր երկիրը պտտվում է:

**3*30. Նախադասությունն ընդարձակի՛ր* ՝ *ավելացնելով* ո՞ւր, դեպի ո՞ւր, որտե՞ղ, որտեղի՞ց, որտեղո՞վ *հարցերին պատասխանող բառեր կամ բառակապակցություններ:***

**Օրինակ՝**

Օրվա հերոսը գալիս էր: - Օրվա հերոսը *մեզ մոտ* էր գալիս: Օրվա հերոսը *դեպի տուն* էր գալիս: *Փողոցով* օրվա հերոսն էր գալիս: *Դիմացից* օրվա հերոսն էր գալիս:

Մի ոհմակ է երևում: - Անտառում մի ոհմակ է երևում:

Ի՛նչ հանգիստ ես կանգնած: Հիվանդանոցում ի՛նչ հանգիստ ես կանգնած:

Թռչունների մի երամ անցավ: - Բակում թռչունների մի երամ անցավ:

Երամը թռավ, հեռացավ: - Երամ թռավ հեռացավ տաք երկրներ:

Նախորդ օրը կարգուկանոն էր հաստատել: - Հայաստանում Նախորդ օրը կարգուկանոն էր հաստատել:

Հաջորդ օրը բոլորս գնալու էինք: - Հաջորդ օրը բոլորս գնալու էինք Իտալիա

Այդ փոքրիկին կարելի է տեղավորել: - Այդ փոքրիկին կարելի է տեղավորել Արամի կողքը

**331. Նախադասությունն ընդարձակի՛ր՝ ավելացնելով ո՞ւմ *կամ* ի՞նչը *հարցերին պատասխանող բառեր կամ բառակապակցություններ:***

Մարդն ամբողջ կյանքում սիրում է: Մարդն ամբողջ կյանքում սիրում է Բետիին

Առավոտյան անտառում որսորդները գտել են: Առավոտյան անտառում որսորդները գտել են ինձ:

Հեռուներից վերադարձած մարդը կարոտով գրկեց: Հեռուներից վերադարձած մարդը կարոտով գրկեց շանը:

Հանկարծ իր կողքին տեսավ: Հանկարծ իր կողքին տեսավ կատվին

*333. Նախադասությունն ընդարձակի՛ր* **՝ե՞րբ, երբվանի՞ց, որքա՞ն ժամանակ, մինչև ե՞րբ** *հարցերին պատասխանող բառեր կամ բառակապակցություններ ավելացնելով:*

Մի տարօրինակ ճռռոց եմ լսում:,.; **Այսօրվանից մի տարօրինակ ճռռոց եմ լսում:**

Իմ կարծիքն ասել եմ: Իմ կարծիքն ասել եմ երեկ:

Գնաց, գնաց, հասավ մի քաղաքի: Գնաց, գվնաց, հասավ մի քաղաքի մինչև ամառ այնտեղ կմնա: